

Կարեն Թոխաթյան  
Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ  
karen.tokhatyan@gmail.com

## ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱԾԽԱՐՅՆԵՐԻ ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐՆԵՐԸ\*

**Հիմնաբառեր.** Արցախ, ժայռապատկեր, Հայկական լեռնաշխարհ, Նախիջևան, Սյունիք, Քարվաճառ, Ծղուկ լեռ:

Հայաստանի ժայռապատկերներն ունեն ճանաչողական մեծ արժեք, որպես նախագրային շրջանի պատմամշակութային սկզբնաղբյուր, որը յուրօրինակ, պատկերային կերպով արտացոլում է վաղնջական անցյալը: Ժայռապատկերման երևույթը ժամանակի աշխարհընկալումային, ծիսապաշտամունքային և ուսուցողական ոլորտների անբաժան մաս է կազմել:

Հնագույն շրջանի կյանքի էական կողմերն արտացոլող բազմաթեմա և բաղադրյալ այս կոթողներն ակնառու կերպով, ուրույն պատկերագրությամբ պահպանել և փոխանցել են նախնյաց մտավոր գործունեության արգասիքները: Հայաստանում հնուց ի վեր ծագած ժայռագրությունը հարատևել է որպես մարդկային հաղորդակցության միջոց՝ իրականացնելով տեղեկության ու զգացումի գրանցման, արտահայտման, կուտակման և փոխանցման գործառույթներ, այդ կերպ ապահովել է սերունդների կապը, կենսավորձի, մտածելակերպի և մշակույթի անխզելիությունը, պահպանել անցյալի խորհուրդը:

Ժամանակի անհունը հաղթահարած խորհրդալի այս կոթողները կարևորվում են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. 7–2-րդ հազարամյակների պատմական իրողությունների հասկացման, ազգաձագման և ժողովրդագրական գործընթացների հստակեցման խնդիրներում:

Հսկայական քանակությամբ, ոճական ու բովանդակային հարստությամբ հայոց ժայռարվեստը եզակի է Հին Աշխարհի մշակութային ժառանգության համապատկերում: Լեռնաշխարհի մերձակալքում հնագույն ժայռապատկերները քիչ են, մինչդեռ ներսում դիտվում է դրանց գերկենտրոնացում, թեմաների ու տեսակների բազմազանություն (քարտեզ 1):

Հայկական լեռնաշխարհում ժայռապատկերները կենտրոնացած են Մեծ Հայքի Այրարատ աշխարհում և շուրջը՝ Կարս, Հոռոմ, Գոշ, Լճաշեն, Գեղամա լեռներ, Ջովունի, Քուչակ, Արագած լեռ, Աշտարակ, Ոսկեհատ, Ագարակ, Արմավիր,

\* Ստացվել է 02.09.2022թ., ուղարկվել է գրախոսման 03.09.2022թ., ընդունվել է տպագրության 18.11.2022թ.:

Մեծամոր, Շամիրամ, Կաքավաձոր, Մաստարա, Արտին լեռ ու Գոմշուտ (Կաղզվան) վայրերում: Այրարատից հյուսիս՝ Գուգարք աշխարհում են Թռեղքի, Պաղաղբյուրի, Լոռիբերդի, Կողեսի, Եղիտանքի, Նեղոցի, դեպի հյուսիս – արևմուտք՝ Տայք աշխարհում են Կրիակունքի ժայռանկարները: Դեպի արևելք՝ Սյունիք և Արցախ աշխարհներում են Թեքսարի, Վարդենիսի, Քարվաճառի, Սյունիքի լեռների և Նավասարի, հարավում՝ Վասպուրական աշխարհում են Տիրիշինի, Կորճայք աշխարհում՝ Գավառակի և Սաթ լեռան պատկերախմբերը: Աղձնիք աշխարհում ժայռանկարներ կան Բնջրի և Քաղիթ գետերի մոտ (քարտեզ 2):

Հայաստանի տարածքում կա ուղղակի հետազոտության համար մեզ մատչելի դրանց կուտակման յոթ հիմնական բարձրալեռնային տարածք՝ Գեղամա, Վարդենիսի, Թեքսարի, Սյունիքի, Զանգեզուրի, Քարվաճառի լեռներ և Արագած (քարտեզ 3):

Ժայռանկարների և հնաստղագիտական կոթողների հետազոտությունը Գեղամա լեռներում սկսել են 1987 թվականին: Տարիներ անց գիտարշավներն ընդգրկեցին Արագածի լանջերը, Սյունիքի, Վայքի և Քարվաճառի լեռները: Համացանցի զարգացմանը զուգընթաց, հնարավորինս ներառվեց Մեծ Հայքի բնագավթված տարածքների նյութը: Ընդլայնվել է հետազոտական դաշտը՝ դիտարկվել է ներկայիս Հայաստանի լեռներում իմ գրանցած մոտ 4500 նորահայտ ժայռապատկեր (Գեղամա լեռներ՝ 3000, Արագած՝ 700, Թեքսար՝ 600, Սյունիք ու Քարվաճառ՝ 200) և երկու տասնյակ ծիսապաշտամունքային և երկնադիտական կառուցվածք ու քարակոթող:

1932թ. լեզվաբան, հնագետ Իվան Մեշչանինովը հրատարակել է Արցախի Տանձատափի (նախկին Խոջալու, այժմ՝ Իվանյան) գյուղի մոտ դարասկզբին պեղված N 7 դամբարանի մ.թ.ա. 13-րդ դ. ծածկասակերի վրա 1926թ. տեսած գծային նշանագրերը<sup>1</sup>: Նա եզրակացրել է, որ սեպագիրը «քնավ էլ անդրանիկ գրությունը չէր տեղում: Տեղական գրային համակարգը... շարունակում էր գոյությունը նաև սեպագրի օրոք» (Мещанинов 1932, 55; Мещанинов 1933, 54 55, նկ. 20 – 21, տես նաև Մովսիսյան 1999, 205: Մովսիսյան 2021, 104: Թոխաթեան 2003, 65, նկ. 13; Кушнарева 1970, 109 – 124: Асрян 1999, 16 – 17):

**1966 թ. Ծղուկ (Սիւնիք աշխարհի Ծղուկ գավառ – Սիսիանի շրջան – Սյունիքի մարզ):** Ղարաբաղի բարձրավանդակի Ծղուկ լեռան (3584 մ) հյուսիս – արևմտյան ստորոտի «Ուղտասար» կոչված<sup>2</sup> հնավայրում և Ջերմաջուր, Կարկառ տեղամասերում Գրիգոր Կարախանյանը և Պավել Սաֆյանը հայտնաբերեցին ավելի քան 2000 ժայռապատկեր (նկ. 1): Արշավախումբը 1967–1968 թթ. հետազոտել է նաև հարակից տարածքը՝ Վարդենիսի լեռների ստորոտները, Եղեգիս, Արփա, Որոտան գետերի ակունքները, որոնք մասամբ ընդգրկում են Քարվաճառը և:

1 Դրանք նկատել էին դամբարանը պեղած Ե.Ռյոպերը (1899–1901) և Յա.Գումմելը (1930–193):

2 Իրականում, Ուղտասարը (այժմ՝ Ուղտուակունք, Սատանաքար) սրանից 25 կմ հյուսիս արևմուտք է: Ծիսապաշտամունքային դերի առումով՝ որպես սրբազան տարածք, առավել բնութագրական են հնավայրի՝ իմ առաջարկած և արդեն շրջանառվող Ուլտասար, իսկ տեղագրական առումով՝ Ծղուկ անվանումները:

Տարածքը բնորոշվեց որպես «նախնադարյան սրբատեղի», «լեռնային տաճար», իսկ երախտավոր նախահայրերի դրոշմած գաղտնախորհուրդ պատկերները՝ նախնադարյան աշխարհայեցողության արձագանքները բազմահարուստ բանարվեստի և անկրկնելի հերոսավեպի էջերում, հնագիտական և ազգագրական նյութերում:

Համադրելով տարածաշրջանի պեղածո նյութերի հետ՝ «նախնադարյան հասարակության պատմության, նրա մշակույթի համակողմանի ուսումնասիրության» այս աղբյուրները համարվեցին մ.թ.ա. 8–3-րդ հազարամյակների արգասիք: Կարևորվեց «վաղմջական դարերի ոգին» արտացոլող պատկերների՝ «նախնադարյան մարդու գեղազիտական աշխարհը թափանցելու» միջոց լինելը, ծիսապաշտամունքային ու տիեզերաբանական իմաստը. «քարե «կտավները» բնության գլխավոր պատկերներն են՝ արևն ու լուսինը, երկինքն իր աստղերով, բնության ահեղ երևույթները՝ որոտն ու կայծակը»: Հատուկ նշվեց «տիեզերական պատկերացումներ»՝ արև, խաչ, կեռիսաչ արտացոլող նկարների առատությունը: Մանրագին մեկնաբանված ժայռապատկերները համադրվեցին նաև ազգագրական, մատենագրական, բանահյուսական նյութերի, նախշագարդի և մանրանկարի հետ. այդ կերպ պատկերների հնագույն շերտը թվագրվեց առավել նեղ միջակայքում՝ մ.թ.ա. 5–2-րդ հազարամյակներով: 1970թ. հրատարակված գրքում կա 805 արտանկար և 17 լուսանկար, շարադրված է ՀՍՍՀ ժայռարվեստի հետազոտման հակիրճ ակնարկ (Կարախանյան, Սաֆյան 1970):

Ծղուկից բերված 19 ժայռանկարներից 10-ը դրվեց Երևանի Նոր Նորքի 2-րդ գանգվածում: Այժմ տեղում՝ «Տիգրան Մեծ» զբոսայգում երևում է լոկ հինգը, երկուսը՝ 1979թ. դրված էին Երևանի պետական համալսարանի բակում (կենսաբանության ֆակուլտետի ջերմոցի մոտ), այժմ առկա է մեկը: Մեկ այլ ժայռապատկեր 1979թ. ամռանը տեղափոխվել է Հայոց ազգագրության թանգարան, ևս վեցը 1986թ. դրվել է Ն. Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարանի բակում:

**1967 – 1968 թթ. ԽՍՀՄ ԳԱ Երկրաբանության ինստիտուտի արշավախումբը հետազոտեց Սյունիքի ժայռապատկերները:** Դրանք համարելով մ.թ.ա. 7–3-րդ հազարամյակների արդյունք՝ ենթադրվեց, որ լավայի վերջին արտահոսքերը եղել են մ.թ.ա. 4–3-րդ հազարամյակների միջև (Мкртчян, Трифонов, Флоренский 1969, 78–79):

**1976 թ., Քարվաճառի լեռներ (Արցախ աշխարհի Վայկունիք գավառ-ԱՀ Շահումյանի և Քաշաթաղի շրջաններ):** Հրապարակվեց Ծալք<sup>3</sup>, Սև, Մեծ և Փոքր Ալ լճերի շրջակայքի հազարավոր ժայռանկարների մասին: Դրանք թվագրվել են մ.թ.ա. 4–2-րդ հազարամյակներով (Исмаилов 1977, 491–492. Исмаилов 1990, 96–97. Кәлбәчәր 1981, 334): Ավելի քան 5000 կոթող կա Թարթառ, Հոչանց, Աղավնո գետերի ակունքներում, Պելսար (3616 մ), Սխտորասար (3344 մ), Հարսնաքար

3 Ծալքի ակերից 1980-ական թթ. 17 ժայռապատկեր է բերվել Քարվաճառի թանգարանի բակ: 2000թ. հուշարձանագետ Սամվել Կարապետյանը տրամադրեց դրանց յոթ լուսանկար, իր գործընկեր Սասուն Դանիելյանը 2016 թ.՝ ևս հինգը: Ըստ Քարվաճառի բնակիչ, բանասեր, քաղաքագետ Ալեքսանդր Քանանյանի, 2015թ. դեկտեմբերին տարածքը բարեկարգելիս մի քանիսը վնասվել են կամ անհետացել:

(3336 մ), Տոլի (3327 մ), Եռակատար (3256 մ), Լուլպար (2978 մ) և այլ լեռների լանջերին (Սիմոնյան 1995: Սիմոնյան 1998, 32, 35: Կարապետյան 1999, 14, 75–76: Փարադժեյա 2009, 40–43. Թոխաթեան 2003, 84): Բովանդակությամբ ու ոճով դրանք Թեքսարի և Սյունիքի ժայռավետի բնական շարունակությունն են (սկ. 2.1–2.4):

1980-ական թթ. գտնվեցին Ադուի (Նախիջևանի Շահապոնք գավառ), Հայկաջրի (ԱՀ Ակնայի շրջան), Քարվաճառի և Շամախի գլխաքանդակները (Յֆենդիև 1986, 3–7): Արցախի և Ոսիքի տափաստանային մասերում մ.թ.ա. 10–6 դդ. մարդակերպ կոթողներ են գտնվել 2013 թ. Թովուզի շրջանում, 2016 թ.՝ Նոր Կարմիրավանում (ԱՀ Մարտակերտի շրջան)<sup>4</sup>: 1998 թ. Այգառք քաղաքի կենտրոնում (Կորճայք աշխարհի Աղբակ գավառ, այժմ՝ Հաքքարի) գտնվեց մ.թ.ա. 13–12-րդ դդ. մարդակերպ, քանդակապատկերներով 13 արձան: Փորագրված են զինված մարդիկ, կենդանիներ, անսովոր իրեր՝ կաշեպարկ, ձուլակտոր (Ալեքսանյան 2009, 65, 68):

1978 թ., Բաղաբերդ (Սիւնիք աշխարհի Ձորք գավառ-Կապանի շրջան-Սյունիքի մարզ): Դավիթբեկ գյուղից հս., Ողջի գետի և դրա ձախ վտակ Գիրաթաղի անկյունում գտնվող վաղմիջնադարյան (3–4-րդ դդ.) ամրոցում պեղվել է նշանակիր քարասալ (Գրիգորյան, Հախվերդյան 2001, 42: Մովսիսյան 2003, 128: Մովսիսյան 2021, 178, 60: Գրիգորյան 2007, 112):

1990 թ., Շուշի (Արցախ աշխարհի Պարսականք գավառ-ԱՀ Շուշիի շրջան): Հնակենդանաբան Սոնա Մեջլումյանն ինձ հաղորդեց քաղաքի մոտ, անտառում տեսած այծապատկերների մասին: 2009 և 2015 թթ. քաղաքի «Հունտի ձորի» պոնկին նկատել են խորակոս գծային փորագրեր:

Այսպիսով, Արցախ աշխարհի տարածքում ժայռապատկերները հետևյալ շրջաններում են.

**Ասկերան.** Տանձատափ, Շուշի:

**Շահումյան.** Քարվաճառի Փորակ, Սխտորասար, Հարսնաքար, Եռակատար, Տոլի, Լյուլպար լեռների լանջեր, Փոքր Ալ, Ծալք և Սև լճերի ափեր, Գորտագետի հուն, Եղցատեղ գյուղից արևմուտք:

**Քաշաթաղ.** Իշխանասարի հյուսիսային լանջի Սև լճի ափեր:

Քարվաճառի լեռների ժայռապատկերների շարքում առանձնանում է աշխարհում հայտնի՝ հրաբխային ժայթքման երկրորդ ժայռանկարը (սկ. 2.2): 1998 թ. ամռանն այն հայտնաբերել է երկրաբան Արա Ավագյանը, Սխտորասար գագաթից (3344 մ) 3 կմ հյուսիս–արևմուտք, հորդառատ աղբյուրներից 500 մ արևելք, 3070 մ բարձրությամբ տեղանքի մի ձորակում, մեկնաբանելով որպես Վարդենիսի լեռնաշղթայի Փորակ հրաբխի (3046 մ) ժայթքման դիտման արտացոլում (Avagyan 2001, 166–167. Avagyan, Karakhanian, Philip 2003, 13–14. Karakhanian et al 2002, 329–330, նկ.10: Ավագյան 2019, 219–222): Պատկերը գտնվում է հրաբխից 11 կմ հարավ–արևելք:

4 Արցախում կա մոտ 20 նմանատիպ կոթող (Ավետիսյան, Գնունի, Բորոխյան, Սարգսյան 2015, 118–122, 134–135: Երանյան 2015, 128–140: Yeranyan 2021, 248–254): Թովուզի կոթողների մասին տես Երանյան 2016, 69–70:

Ըստ երկրաբանական տվյալների, հավանական է, որ Փորակը գործել է երեք անգամ: Վաղագույն ժայթքումը տեղի է ունեցել մ.թ.ա. 5-րդ հազարամյակով՝ 4730–4160 թթ. միջև (Avagyan 2001, 166–167. Avagyan, Karakhanian, Philip 2003, 13–14. Karakhanian et al 2002, 329–330. նկ. 10; Հարությունյան Ռ. 2006, 75–77: Ավագյան 2019, 219–222):

Հավանաբար, այն գործել է նաև մ.թ.ա. մոտ 780 և մոտ 740 թթ.: Արգիշտի Ա արքան Խորխոռոյան տարեգրությամբ վկայում է. «Բելխուրա (քաղաքը) վերապաշարեցի, Բելխուրա (քաղաքի) Բամ (լեռը) փլուեց. Ծուխն (?) ու մուրը (?) այժմ (սրա) վրայից մինչև արևն է ելնում: Երբ Բամ (լեռը) փլուեց, ես Բելխուրա (քաղաքը) գրաւեցի» (Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա 1981, 66, 69: Բարսեղյան 1995, 10: Կարազեղզեան 1998, 121: Grekyan 2019, 81): Նա Սևանի ավազան է արշավել 783–772 թթ. միջև (Меликишвили 1960, 255): Բելխուրան լճի հարավում էր, որտեղի Բամ(ն) լեռան տեղը հստակ չէ՝ ամբողջ Վարդենիսի լեռնաշղթան կարող էր Բամնի կոչվել (Арутюнян 1985, 59: Երեմյան 1982, քարտեզ: Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1986, 582)<sup>5</sup>: Մոտակա հրաբուխներից հոլոցենում հզոր արտավիժում է դրսևորել Փորակը (Ширинян, Карапетян, Карапетян, Харазян 1978, 279–283. Հարությունյան Ռ. 2006, 85), որը սեպագրում կարող էր կոչվել Բամ/Բամնի:

Բացառված չէ, որ Բամի գործունեությունը շարունակվել է. ըստ Սարգսյանի Բարքայի Գանձադոռան տարեգրության՝ «Քանի մարդ իմ գեղքի (?) առջևից ճողոպրում էր և բռնեց (=գրավեց) Ուշքիա և Բամ (լեռները): Ուլքեր ճողոպրում էին, Թեյշեքան (=կայծակը) այրեց» (Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա 1981, 80: Կարազեղզեան 1998, 253: Ջահուկյան 1987, 445: Grekyan 2019, 84): Թեյշուքն առնչվում է նաև լեռան պաշտամունքին: Թվում է, խոսքը պարզապես կայծակի մասին է, սակայն, հրաբխային երևույթները հնում կապել են նաև «երկնքից ընկնող հրո» հետ (հրաբխի մոխրագազային ամպերում հաճախ են կիրմետրանոց կայծակները, տե՛ս Мархинин 1985, 50): Ուստի, հավանական է մ.թ.ա. 742–739 թթ. միջև տեղի է ունեցել Բամի այս երրորդ ժայթքումը<sup>6</sup>:

Կոնիայի դաշտի Եղանիկ հնավայրի որմնանկարում (մ.թ.ա. 6150 թ.) պատկերված է 130 կմ հյուսիս–արևելք գտնվող Հրասարի ժայթքումը (Mellaart 1967, 133, նկ. 59–60): Երրորդը Պատագոնիայում է (Avagyan et al 2017, 83; Avagyan et al 2018, 15–16, Ավագյան 2019, 222–223, նկ. 4.37B):

2002 թ. հրապարակվեց Սյունիքից հարավ՝ Արաքսի աջափնյակում, Վասպուրական աշխարհի Արտասանեան գավառի Մոնգուն, Արասբարան, Վանստան և վեց այլ վայրում 1998–2002 թթ. գտնված պատկերների մասին (Rafifar 2002, 45–75. Rafifar 2003, 45–46. Rafifar 2007, 203–213. Binandeh 2016, 12–17): Հիմնականում

5 Ծագումնաբանորեն, որտաձայն հրաբխի անունը կարող է առնչվել բամբ՝ հաստ ձայն (Աճառյան 1971, 401), հ.ե. \*բամ–խոսել, ասել բառին (Ջահուկյան 1987, 220), ինչն առաջին՝ մ.թ.ա. 5-րդ հազարամյակի ժայթքման ևս մի վկայություն կլինի:

6 Սա միջգիտաճյուղային համագործակցության լավ օրինակ է: Երկրաբանորեն թվագրված բներևույթի տարիքը նպաստում է ժայռապատկերի թվագրմանը, և հակառակը՝ բներևույթի փորագիր պատկերը լրացնում է այդ երևույթի գոյության և ընթացքի հանգամանքները:

կենդանիներ և որսի տեսարաններ են, բովանդակությամբ, ոճով ու պատկերատարներով նման են Սյունիքի, Քարվաճառի, Նավասարի (Այվազյան 1981, 45–53) հորինվածքներին:

2003 թ., Ներքին Գողեձոր և Շաղատ (Միսիք աշխարհի Ծղուկ գավառ-Միսիանի շրջան-Սյունիքի մարզ): Իշխանանիստ Շաղատ գյուղաքաղաքից 2 կմ հս., Որոտանի կիրճի ձախափնյակի բարձրադիր (1800 մ), մ.թ.ա. 6–4-րդ հազարամյակների վաղ երկրագործական բնակատեղիի անտառապատ մասում, մեծ ժայռին խոյի պատկեր կա (Avetisyan, Chataigner, Palumbi 2006, 7): 2012 թ. հնագետ Մկրտիչ Զարդարյանը հաղորդեց Շաղատից 3 կմ հարավ–արևմուտք, Բջնաղի լեռնանցքով (2346 մ) Նախիջևան իջնող ճանապարհին, Արագջուր գետի ձախափի միջնադարյան գյուղատեղիի հս. եզրին գտնվող ժայռապատկերի մասին: Այստեղից 20 կմ հարավ–արևմուտք (Բջնաղից 8–9 կմ հարավ–արևմուտք), նույն ճանապարհին գտնվող Ուենի գյուղի մոտ (Միսիք աշխարհի Ճահուկ գավառ, այժմ՝ Նախիջևան) 1979 թ. Արգամ Այվազյանը նկատել է ժայռապատկերային ոճով փորագրված ուշագրավ տապանաքար (Այվազյան 2010, 65, նկ. 212):

2011 թ. հրապարակվեցին Ծղուկի, 2013–2016 թթ.՝ մոտակա Նագելի լեռան և Սեպասարի գրեթե 3300 ժայռապատկերների հայ-գերմանական համատեղ հետազոտության արդյունքները (Meller, Knoll, Dresely 2011, 131–142. Knoll et al 2013, 209–230. Knoll, Meller 2015, 153–158. Knoll, Meller 2021, 42–51. Knoll 2016, 73–83): Ուխտասար–Ծղուկ հատվածի ժայռապատկերները 2009 թ. ուսումնասիրվել են հայ-բրիտանական՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Landscape Research Centre-ի համատեղ արշավախմբի կողմից (ughtasarrockart-project.org): Նորանոր ժայռապատկերներ ենք գրանցել 2018 թ. հունիսի 10-ին, բնապահպան Վահագն Վարդումյանի հետ (նկ. 26–7): Իր ատենախոսության մեջ տարածքի կոթողներին անդրադարձել է նաև Անի Դանիելյանը (Danielyan 2019, 356–358):

2015 թ., Խնածախ և Հարժիս (Միսիք աշխարհի Հարանդ գավառ-Գորիսի շրջան-Սյունիքի մարզ): Հրապարակվեցին Խնածախի մոտ, Բիավեր վանքից ոչ հեռու և Հարժիսի շրջակայքում պահպանված մենաքարերի և քարաշարքերի հնագիտական հետազոտության արդյունքները (Ավետիսյան, Գնունի, Բոբոխյան, Սարգսյան 2015, 57, 103, 144, աղ. 50):

2012 թ., Սառցալի (Միսիք աշխարհի Ծղուկ գավառ-Ազիզբեկովի շրջան-Վայոց ձորի մարզ): Հնագետ Հակոբ Միմոնյանի արշավախումբը տասնյակ ժայռապատկերներ է գրանցել Սառցալի լեռան (3433 մ) լանջերին, Ջերմուկից 12 կմ հս-արլ. (Միմոնյան 2016, 82): 2020 թ. օգոստոսի 19-ին լեռան արլ. կողմի երկու քարակույտում հուշարձանագետ Սևակ Արևշատյանը նկատել է մոտ հարյուր ժայռապատկեր և լուսանկարել դրանցից 26-ը (նկ. 25):

2013 թ. սեպտեմբերի 14–15 և 28–29, Հուսո սար (Մուրադսար), (Միսիք աշխարհի Վայոց ձոր գավառ–Եղեգնաձորի շրջան–Վայոց Ձորի մարզ)<sup>7</sup>: Թեքսարի

7 Տեղի ժայռանկարները նկատվել և մասամբ նկարագրվել են ավելի վաղ (Կարախանյան, Սաֆյան 1970, 12, 35):

լեռնաշղթայի արլ. բարձունքներում (2900–3100 մ), Վայոց թեմի առաջնորդ Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանի և մարգպետ Էդգար Ղազարյանի աջակցությամբ, դիցարան Գոհար Վարդումյանի, պատմաբան Կարեն Խաչատրյանի և Հակոբ Սիմոնյանի հետ լուսանկարել ու քարտեզագրել ենք տասնյակ ամփոփ պատկերախմբերում գտնվող մոտ 400 ժայռանկար: Հայտնաբերման աշխատանքը շարունակել ենք 2018 թ. հոկտեմբերի 1-ին և 2020 թ. օգոստոսի 29-ին:

2014 թ. մայիսի 9, Արփի (Սիւնիք աշխարհի Վայոց ձոր գավառ-Եղեգնաձորի շրջան-Վայոց ձորի մարզ): Գյուղից 1 կմ հվ., միջնադարյան Էրդեչ բերդի<sup>8</sup> հվ. կողմում Ա. արքեպ. Մկրտչյանը գտել է գծային, ոչ խորը փորվածքներով մեծաչափ, երկարով քար: 2018 թ. սեպտեմբերի 30-ին նկատեցի, որ դեպի վեր ուղղված երկու անկյունիկով և դրանց մեջտեղի ճառագայթավոր շրջանիկով կարող էր նշվել արևածագի կետը, որը ճիշտ դիմացի երկու լեռների միջև է:

2015 թ. օգոստոսի հունիսի 17-ին և 20-ին Քարվաճառի լեռների հս. մասում (ԱՀ Շահումյանի շրջան), Փոքր Ալ լճի հս. ափին և դրանից 3 կմ արլ. հնագետներ Գագիկ Սարգսյանը, Արտակ Գնունին և Արսեն Բորոխյանը հայտնաբերել են մոտ 10 ժայռապատկեր (Avetisyan et al 2021, 201–214, նկ.18–29) (նկ.2.4): 2005 թ. օգոստոսի 13-ին հնագետներ Թինա Վոլքլինգի (Մեծ Բրիտանիա) և Աշոտ Խաչատրյանի հետ Մեծ Ալ լճի արևմտյան և հյուսիսային, իսկ 2017 թ. հուլիսի 20-ին երկրաբան Արա Ավագյանի հետ լճի արևելյան և հյուսիսային, ափերի ափամերձ քարացրոններում ժայռապատկեր չենք նկատել:

2019 թ., Յուղարոտ (Սիւնիք աշխարհի Ծղուկ գավառ-Սիսիանի շրջան-Սյունիքի մարզ): Հրատարակվեց լեռան գագաթնամերձ մասում՝ Սառնակունք գյուղից 5 կմ հարավ 2016 թ. հայտնաբերված հինգ ժայռապատկեր (Ծերեթյան 2019, 109–112, նկ.3):

Արցախի և Նախիջևանի, Արևմտյան Հայաստանի ժայռարվեստային նյութը, առհասարակ մշակույթը, և հատկապես՝ տեղանունները ենթարկվել են ժառանգականության աղավաղման, անվանադիր հանրության էթնոլեզվական պատկանելության նենգափոխման (Алиев 1985, 13; Эфендиев 1986, 10. E. Alok, E. Anati, O. Belli, A. Erzen, K. Kökten, H. Koşay, H. Vary հեղինակների աշխատանքները և, հատկապես՝ համացանցային հրապարակումները): Թուրքական և ադրբեջանական իշխանությունների հրահանգով շարունակվել է հայրենագրկման քաղաքականության մաս դարձած մշակութակործան եղեռնը՝ հայոց պատմության ու ժողովրդագրության խեղաթյուրման, մշակույթի բռնագավթման և ոչնչացման, պատմաաշխարհագրական ու տեղանվանական ոլորտներում զեղծարարության միջոցով<sup>9</sup>:

8 Ստեփանոս Օրբելյան, 395: Էրթիճ և Վերտիչա անվանաձևերը տե՛ս Բարխուդարյան 1967, 27–28: Բերդից 1 կմ հարավ գտնվում է 13-րդ դ. Քարայր-կացարանների համալիրը, հին գյուղատեղին ու «Ջրով վանք» մատուռը, կա նաև մ.թ.ա. 2-րդից 1-ին հազարամյակների դամբարանադաշտ: 2 կմ դեպի հարավ «Մոզորովի», իսկ 3 կմ արևելք՝ «Արջերի» անձավներն են:

9 Ցեղասպանության տարիներին և հետո ոչնչացվեցին հայ մշակույթի անհամար արժեքներ (քաղաքակրթական, ազգագրական, ճարտարապետական, արհեստագործական,

Այսպիսով, ժայռապատկերային մշակույթով ևս Հայկական լեռնաշխարհը ներկայանում է որպես մեկ ամբողջություն, որի մարդաբանական ու մշակութաբանական պատկերն անընդհատ է՝ ըստ տարածքի (մոտ 400 հազար կմ<sup>2</sup>) և ժամանակի (հարյուր հազարավոր տարիներ): Առաջնահերթ է այս ժառանգության՝ հայագիտական հայեցակարգով համահավաք ուսումնասիրությունը:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Սկզբնաղբյուրներ**

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ 1986–Սյունիքի պատմություն, թարգմ., ներածությունը և ծանոթագր.՝ Ա. Արքահամյանի, Երևան, 1986:

ԱՃԱՌՅԱՆ 1971–Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Հ. Ա, Երևան, 1971:

ԲԱՐԻՆՈՒԴԱՐՅԱՆ 1967–Բարխուդարյան Ս. (կազմող), Դիվան հայ վիմագրության, III, Վայոց ձոր, Երևան, 1967:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ 1981–Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հ.1, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևան, 1981:

ՀԱԿՈՐՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱՆՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1986–Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Սո., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ.1, Երևան, 1986:

ՋԻՀԱՆՅԱՆ 2015–Ջիհանյան Վ., Հայկական լեռնաշխարհի ու հարակից շրջանների տեղանուններ. հետադարձ բառարան, խմբ. Յոս Կայթնքերգ, Երևան, 2015:

ШИРИНЯН, КАРАПЕТЯН, КАРАПЕТЯН, ХАРАЗЯН 1978–Ширинян К.Г., Карапетян К.И., Карапетян С.Г., Харазян Э., Каталог верхнеплиоцен–четвертичных вулканов Арм. ССР, т.2, Фонды Института геологических наук НАН РА (рукопись).

**Գրականություն**

ԱԼԵԲՍԱՆՅԱՆ 2009–Ալեքսանյան Ա., Հաքքարիի արձանները, «Էջմիածին» ամսագիր, 2009, Ժ, էջ 60–68:

ԱՅՎԱԶՅԱՆ 1981–Այվազյան Ա., Նավասարի ժայռապատկերները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, N 2, էջ 45–53:

ԱԶԱՄՕՂԼՅԱՆ, ԲԱԲԱՅԱՆ 2015–Աջամողլյան Ա., Բաբայան Տ., Աշխարհագրական և պատմամշակութային արժեքների անվանափոխման դրսևորումները Հայկական

---

ձեռագրական են), ինչը շարունակվում է որպես հայոց տեղաբնակության և մշտագոյության ժխտման, փաստական հիմքերի նպատակալաց վերացման պետական քաղաքականություն: Հայոց մշակույթի ոչնչացումը հայկական հարցի՝ երիտթուրքերի ծրագրած «լուծման» մի մասն էր: Հանրապետական Թուրքիան որդեգրեց ցեղասպանության փատի նենգափոխման և հայ մշակույթի կոթողների վերացման քաղաքականությունը՝ մշակույթի շարունակվող ցեղասպանությունը, պատմական հիշողության ջնջման միջոցով հայոց հայրենատիրության խնդրի առկախման, մոռացման հիմնական նպատակով: Հայոց պատմության խեղաթյուրման մասին տես Սարգսյան, Սահակյան 1963: Մարտիրոսյան 1971: Զուլայան 1995: Հովհաննիսյան 2005: Hovhannisyanyan 2006: Ստեփանյան 2010: Նահապետյան 2010: Մելքոնյան 2011, 2015: Թոխաթյան 2011, 2020: Danielyan 2013: Stepanyan 2013: Դանիելյան 2014: Աջամողլյան, Բաբայան 2015: Մուրադյան, Մուրադյան 2015: Ջիհանյան 1991, 2015: Կոստիկեան 2017: Խաչատրյան, Սուքիասյան, Բաղայան 2020: Khachatryan, Sukiasyan, Badalyan, 2021:



- լեռնաշխարհում, «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2015, էջ 148–158:
- ԱՎԱԳՅԱՆ 2019–Ավագյան Ա.Վ., Ակտիվ խզվածքների մերձակերությունային դրսևորումները, Երևան, 2019:
- ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԳՆՈՒՆԻ, ԲՈՒՐՆՅԱՆ, ՍԱՐԳՍՅԱՆ 2015–Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորոխյան Ա., Սարգսյան Գ., Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը. հնագիտական հետազոտություններ, Երևան, 2015:
- ԲԱՐՍԵՂՅԱՆ 1995–Բարսեղյան Լ.Ա., Պատմագրական վկայությունները Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին (հնագույն ժամանակներից մինչև XIX դ. սկիզբը), Երևան, 1995:
- ԳՐԻԳՈՐՅԱՆ 2007–Գրիգորյան Գր., Վահանավանք, Երևան, 2007:
- ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀԱՄՎԵՐԴՅԱՆ 2001–Գրիգորյան Գր., Հախվերդյան Ս.Գ., Սյունիքի պատմություն, Երևան, 2001:
- ԴՆԻՆԵՆՅԱՆ 2014–Դանիելյան Է., Հայաստանի և այլ երկրների պատմության թուրքադրբեջանական կեղծարարությունների քննադատությունը, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային II համաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2014, էջ 84–87:
- ԵՐԱՆՅԱՆ 2015–Երանյան Ն.Ա., Նոր գտածոներ Արցախի երկաթեդարյան մշակույթի վերաբերյալ, «ՎԷՄ» հանդես, 2015, է, 3 (51), էջ 128–140:
- ԵՐԱՆՅԱՆ 2016–Երանյան Ն.Ա., Արցախի և Ուիքի քարտեզի մարդակերպ կոթողների մեկնաբանության շուրջ, «Գարդմանի և Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդները (պատմություն և արդիականություն)» հանրապետական գիտաժողովի զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, Երևան, 2016, էջ 69–70:
- ԵՐԵՄՅԱՆ 1982–Երեմյան Ս.Ս., Ուրարտու պետությունը (850–590 թթ. մ.թ.ա.), Քարտեզ, Երևան, 1982:
- ԶՈՒՂԱԼՅԱՆ 1995–Զուլայան Մ., Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995:
- ԹՈՒՄԱԹՅԱՆ 2003–Թոխաթեան Կ., Մաշտոցեան տառաձևերի և դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ, «Բազմավեպ» հանդես, Վենետիկ-Ս.Ղազար, 2003, թիվ 1 4, էջ 44–100:
- ԹՈՒՄԱԹՅԱՆ 2011–Թոխաթեան Կ., Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների հայկական ժառանգական պատկանելության նենգափոխումը թուրք-ադրբեջանական կեղծարարների կողմից, «Պատմություն և մշակույթ. Ընդդեմ կեղծիքի և ոտնձգության» հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2011, էջ 65:
- ԹՈՒՄԱԹՅԱՆ 2020–Թոխաթեան Կ., Հայաստանի ժայռապատկերների տիպաբանությունը և պատմամշակութային նշանակությունը, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 2020:
- ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԲԱԴԱԼՅԱՆ 2020–Խաչատրյան Կ.Հ., Սուքիասյան Հ.Կ., Բադալյան Գ.Մ., Հայկական տարածքների բռնակցումը թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920–1930-ական թվականներին, Երևան, 2020:
- ԾԵՐԵԹՅԱՆ 2019–Ծերեթյան Կ., Հայտնաբերումներ Սյունիքում և Վայոց ձորում, «Հուշարձան» տարեգիրք, Երևան, 2019, ԺԻ, էջ 109–122:
- ԿԱՐԱԳԵՈՂԵԱՆ 1998–Կարազեղեան Յ., Սեպագիր տեղանուններ, Հ.1, Գիրք 1, Երևան, 1998:
- ԿԱՐԱՄԱՆՅԱՆ, ՍԱՖՅԱՆ 1970–Կարախանյան Գ.Հ., Սաֆյան Պ.Գ., Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» 4, Պր.1, Երևան, 1970:
- ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 1999–Կարապետյան Ս.Գ., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999:

ԿՈՍՏԻԿԵԱՆ 2017 – Կոստիկեան Ք., Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումներ պարսկերէն վտերագրերում, «Հայկագեան հայագիտական հանդէս», 2017, Հտ. 37, էջ 123–152:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2006 – Հարությունյան Ռ. Հայկական լեռնաշխարհի գործուն հրաբխականությունը և հրաբխային վտանգը, «Հարք» հայագիտական հանդէս, Երևան, 2006, N 1, էջ 74–95:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2005 – Հովհաննիսյան Ա., Թուրքիա Error! Bookmark not defined. Մշակութային ցեղասպանություն, Երևան, 2005:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 1971 – Մարտիրոսյան Հ. Ա., Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2011 – Մելքոնյան Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, 2011:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2015 – Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենագրկում. ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), Երևան, 2015:

ՄՈՎՍԻՍՅԱՆ 1999 – Մովսիսյան Ա., Հայաստանի գծային գիրը (Ք.ա. III–I հազ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Հտ. XVIII, Երևան, 1999, էջ 202–210:

ՄՈՎՍԻՍՅԱՆ 2003 – Մովսիսյան Ա., Հայկական մեհենագրություն, Երևան, 2003:

ՄՈՎՍԻՍՅԱՆ 2021 – Մովսիսյան Ա., Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն, Երևան:

ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՄՈՒՐԱԴՅԱՆ 2015 – Մուրադյան Յու., Մուրադյան Մ., Թուրքերի «քաղաքակրթական ձեռքբերումները» և Արևմտյան Հայաստանի տեղանունների կողոպուտը, «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2015, էջ 306–318:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2010 – Նահապետյան Հ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Երևան, 2010:

ՋԱՀՈՒԿՅԱՆ 1987 – Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

ՋԻՀԱՆՅԱՆ 1991 – Ջիհանյան Վ. Գ., Հայկական լեռնաշխարհի ջրանունները, «Հայոց լեզվի պատմության հարցեր», N III, Երևան, 1991, էջ 193–276:

ՍԱՐԳՍՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ 1963 – Սարգսյան Ե. Ղ., Սահակյան Ռ. Գ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963:

ՄԻՄՈՆՅԱՆ 1995 – Միմոնյան Հ., Քարվաճառի (Քելրաջար) շրջանի հուշարձանների քարտեզ, Երևան, 1995:

ՄԻՄՈՆՅԱՆ 1998 – Միմոնյան Հ. Քարվաճառի հուշարձանները, «Բնօրրան», Երևան, 1998, N 1–2, էջ 31–37:

ՄԻՄՈՆՅԱՆ 2016 – Միմոնյան Հ., Հայաստանի ժայռապատկերային արվեստը, «Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք», Երևան, 2016, էջ 70–87:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2010 – Ստեփանյան Գ., Բարվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010:

ՇԻՐԻՆՅԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԽԱՐԱԶՅԱՆ 1978 – Ширинян К.Г., Карапетян К.И., Карапетян С.Г., Харазян Э., Каталог верхнеплиоцен – четвертичных вулканов Арм. ССР, т. 2, Фонды Института геологических наук НАН РА (рукопись).

AVAGYAN, KARAKHANIAN, PHILIP 2003 – Avagyan A., Karakhanian A., Philip H., Une nruption volcanique gravne dans le roc, Pour la Science, 2003, 305, Mars, p.13–14.

AVAGYAN, RITZ, BLARD, MELIKSETIAN, MUNCH, VALLA, TOKHATYAN, CASELLI, MKRTCHYAN, ATALYAN 2017 – Avagyan A., Ritz J-F., Blard P-H., Meliksetian Kh., Munch Ph., Valla P., Tokhatyan K., Caselli A., Mkrtychyan M., Atalyan T., Evidence of volcanic

- eruptions witnessed by prehistoric man in Armenia and Argentina, «Геофизический журнал», Киев, 2017, 4, Т. 39, с. 83–84.
- AVAGYAN, RITZ, BLARD, MELIKSETIAN, MUNCH, VALLA, TOKHATYAN, MKRTCHYAN, ATALYAN 2018–Avagyan A., Ritz J.-F., Blard P.-H., Meliksetian K., Munch P., Valla P., Tokhatyan K.S., Mkrтчyan M., Atalyan T, Volcanic eruptions witnessed by prehistoric people in Armenia, *Ancient Armenia at the crossroads*, Lyon, France, 2018, 6–7 November, p.15–16.
- AVAGYAN 2001–Avagyan A.V., Estimation of the slip rates and the recurrence intervals of strong earthquakes on the fault system of Pambak–Sevan-Sunik (Armenia): Segmentation and relation with volcanic activity, PhD Thesis, Montpellier II Univ., France.
- AVETISYAN, GNUNI, BOBOKHYAN, SARGSYAN, MKRTCHYAN, DAVTYAN 2001–Avetisyan H., Gnuni A., Bobokhyan A., Sargsyan G., Mkrтчyan L., Davtyan A., *Archaeological Landscapes of Al Lakes*, *Archaeology of Armenia in Regional Context*, Yerevan, "IAE Publ.", 2001.
- AVETISYAN, CHATAIGNER, PALUMBI 2006–Avetisyan P., Chataigner Ch., Palumbi G., *The results of the excavations of Nerkin Godedzor (2005–2006): preliminary report*, «Aramazd» Journal, Yerevan, 2006, N I, p.6–18.
- BINANDEH 2016–Binandeh A., *Looking at Rock Art in Northwest of Iran*, «International Journal of Archaeology». Special issue: Rock art, Handmade architecture, Historical archaeology, 2016, N 4, p.12–17.
- DANIELYAN 2013–Danielyan E., *Turkish-Azerbaijani Falsifications of the Armenian Toponyms as an Indication of the Genocidal Policy*, «Review of Armenian Studies», 2013, N 1, p.159–179.
- DANIELYAN 2019–Danielyan A., *L'art rupestre protohistorique de l'Arménie: étude du site d'Ughtasar (région de Syunik)*, thèse de doctorat soutenue le 6 février 2020, l'Université Paris 1 Panthéon-Sorbonne, p.356–358.
- GREKYAN 2019–Grekyan Y., *Evidence of celestial phenomena in Urartian cuneiform texts?*, «Aramazd» Journal, Yerevan, 2019, XIII, N 1, p.81–100.
- HOVHANNISYAN 2006–Hovhannisyanyan A., *Cultural Genocide*, «Հարթ» հայազխտական հատկություն, Երևան, 2006, N 1, էջ 115–123.
- KARAKHANIAN, DJRBASHIAN, TRIFONOV, PHILIP, ARAKELIAN, AVAGIAN 2002–Karakhanian A., Djrbashian R., Trifonov V., Philip H., Arakelian S., Avagian A., *Holocene-historical volcanism and active faults as natural risk factors for Armenia and adjacent countries*, *Journal of Volcanology and Geothermal Research*, 2002, March, Vol. 113 (1), p.319–344.
- KHACHATRYAN, SUKIASYAN, BADALYAN 2021–Khachatryan K.H., Sukiasyan H.K., Badalyan G.M., *The annexation of Armenian territories to Turkey and Soviet Azerbaijan in the 1920s-1930s*, Yerevan, 2021.
- KNOLL, MELLER, FIGUR, KNOCHE, SCHUNKE, DRESELY, AVETISYAN, KOIKI, LIPTNK, POPPE 2013–Knoll F., Meller H., Figur B., Knoche G., Schunke T., Dresely V., Avetisyan P., Koiki T., Liptnk J., Poppe A., *Die Felsbilder im Hochland von Syunik*, *Archäologie in Armenien*, II, Halle/Saale, Landesamt fՅr Denkmalpflege und Archäologie Sachsen-Anhalt, 2013, p.209–230.
- KNOLL, MELLER 2015–Knoll F., Meller H., *Goats–as far as the eye can see. Recording rock art in the Syunik Highlands (Armenia)*, XXVI Valcamonica Symposium, Italy, 2015, p.153–158.
- KNOLL 2016–Knoll F., *Petroglyphs in the Syunik Highlands (Armenia). Mapping (pre-)historic traces*, *Adoranten*, 2016 (2017), p.73–83.
- MELLAART 1967–Mellaart J., *Çatal Hüyük: A Neolithic Town in Anatolia*, London, 1967.
- MELLER, KNOLL, DRESELY 2011–Meller H., Knoll F., Dresely V. 2011, *Die Felsbilder von Ughtasar*, *Provinz Sjunik*, *Archäologie in Armenien*, Halle (Saale), 2011, p.131–142.

- RAFIFAR 2002–Rafifar J., Rock Carvings of Arasbaran (Soungoun), Iranian Journal of Anthropology, Tehran, 2002, N 1, p. 45–75 (սարսկերնն).
- RAFIFAR 2003–Rafifar J., Rock Carvings in Soungoun and Geghama, Материалы международной конференции «Археология, этнология и фольклористика Кавказа» (Ереван, 17–18 ноября, 2003), Ереван, 2003, с. 45–46.
- RAFIFAR 2007–Rafifar J., Some indications of shamanism in Arasbaran rock carvings, M. Budja (ed.), 14<sup>th</sup> Neolithic Studies, Documenta Prehistoria, 2007, 34, p. 203–213.
- STEPANYAN 2013–Stepanyan G.S., Armenians of Baku Province in the second half of the 19<sup>th</sup> century (historical-demographic study), Yerevan, 2013.
- YERANYAN 2021–Yeranyan N., Main Results of the Study of Anthropomorphic Stelae in Artsakh, Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 60<sup>th</sup> Anniversary of the Institute of Archaeology and Ethnography (Yerevan, 9–11 July, 2019), Ed. by P. Avetisyan and A. Bobokhyan, Yerevan, "IAE Publ.", 2021, p. 248–254.

Էլեկտրոնային սկզբնաղբյուրներ

<https://ughtasarrockartproject.org/>

Karen Tokhatyan

Ph.D in History

*Institute of History NAS RA*

karen.tokhatyan@gmail.com

## THE PETROGLYPHS OF SYUNIK AND ARTSAKH PROVINCES OF GREAT ARMENIA

**Keywords:** Armenian Highland, Artsakh, Nakhjjevan, petroglyph, Karvachar, Syunik, Mount Tsghuk.

The rock carvings of Armenia are of great cognitive importance as a historical and cultural primary source of the pre-literate era, which reflects the deep past in a very pictorial way. These monuments, representing almost all the important spheres of the ancestors' life, have preserved and convey a peculiar picture of their mental activity.

Rock art, which arose in Armenia since ancient times, existed as a means of human cognition and communication, carrying out the functions of expressing, accumulating and transmitting information and feelings, thus ensuring the connection of generations, the continuity of life experience, mentality and culture, preserving the wisdom and essence of the past.

Armenian rock art is distinguished by a huge number of images, stylistic diversity and rich content, and occupies a special place in the cultural heritage of the Ancient World. In the regions adjacent to the Armenian Highland, ancient petroglyphs are rare, while on the Highlands their high density of distribution, thematic and typological richness is observed. On the territory of Armenia, petroglyphs available for direct study (in situ) have been concentrated in seven main high-mountainous regions: the mountain ranges of Geghama, Vardenis, Teqсар, Syunik, Zangezур, Karvachar and the slopes of Aragats.

In the Republic of Artsakh, rock carvings are located in the following places: in Askeran district—on the outskirts of Shushi and near Tandzatap village; in Shahumyan district—on the slopes of Karvachar mountains Porak, Skhtorasar, Harsnakar, Yerakatar, Toli, Lyulpar, at the headwaters of Tartar and Aghavno rivers, on the banks of Tsalk, Sev, Mets and Pokr Al lakes, and west from Eghtsategh village; in Kashatagh district—on the northern slope of Ishkhanasar, near the shore of lake Sevlich.

The petroglyphs of the mountains of Artsakh and Syunik are direct evidences that the monuments of rock art throughout the Armenian Highland form a holistic system, where the continuity of the anthropological and cultural picture is clearly traced in space (400.000 km<sup>2</sup>) and in time (hundreds of thousands of years).

At present, a comprehensive study of this heritage based on the principles of Armenian studies and the creation of an electronic database due to modern methods of cartography is of primary importance.

Карен Тохатян

Кандидат исторических наук

*Институт Истории Национальной Академии наук РА*

karen.tokhatyan@gmail.com

## ПЕТРОГЛИФЫ В ПРОВИНЦИЯХ АРЦАХ И СЮНИК ВЕЛИКОЙ АРМЕНИИ

**Ключевые слова:** Армянское Нагорье, Арцах, Карвачар, Нахиджеван, петроглиф, Сюник, Гора Цхук.

Петроглифы Армении имеют большое познавательное значение как историко-культурный первоисточник дописьменной эпохи, который весьма изобразительно отражает далекое прошлое. Эти памятники, представляющие почти все важные сферы жизни предков, сохранили и передают своеобразную картину их умственной деятельности.

Наскальное творчество, возникшее в Армении издревле, просуществовало как средство человеческого познания и коммуникации, осуществляя функции выражения, накопления и передачи информации и чувств, тем самым обеспечив связь поколений, неразрывность и преемственность жизненного опыта, менталитета и культуры, сохранив мудрость и суть прошлого.

Армянское наскальное искусство отличается огромным количеством изображений, стилистическим разнообразием и богатым содержанием, и занимает особое место в культурном наследии Древнего Мира. В прилегающих к Армянскому нагорью регионах древнейшие петроглифы редки, тогда как на самом Нагорье наблюдается их высокая плотность распределения, тематическое и видовое богатство. На территории Армении доступные для непосредственного изучения (*in situ*) петроглифы накоплены в семи основных высокогорных регионах: горные хребты Гехамы, Вардениса, Тексара, Сюника, Зангезура, Карвачара и склоны г. Арагац.

В Республике Арцах наскальные изображения находятся в следующих местах: в Аскеранском районе – на окраине города Шуши и близ деревни Тандзатап; в Шаумянском районе – на склонах Карвачарских гор Порак, Схторасар, Арснакар, Еракатар, Толи, Люльпар, у истоков рек Тартар, Ахавно, на берегах озер Цалк, Сев, Мец и Покр Ал и к западу от с. Ехцатех; в Кашатахском районе – на северном склоне Ишханасара, у берега оз. Сев лич.

Петроглифы гор Арцаха и Сюника – яркие свидетельства о том, что памятниками наскального творчества тоже Армянское Нагорье представляется как единое целое, где четко просматривается непрерывность антропологической и культурологической картины в пространстве (400.000 км<sup>2</sup>) и во времени (сотни тысячи лет).

В настоящее время первостепенное значение приобретает комплексное и всестороннее изучение этого наследия на основе принципов арменоведения, а также создание электронной базы данных по современным методам картографии.